

Հարգելի հյուրեր,

Թույլ տվեք, նախևառաջ, Գիտության պետական կոմիտեի և անձամբ իմ անունից շնորհավորել Ձեզ՝ Շիրակի հայազիտական հետազոտությունների կենտրոնի 20-ամյակի կապակցությամբ:

Շիրակի մարզ մեր այցելությունը ծրագրված էր վաղուց, սակայն պատահական չէ, որ ներկա ենք հենց Հայազիտական կենտրոնի 20-ամյա հոբելյանական արարողությանը:

Հայաստանի Հանրապետությունում հայազիտությունը մշտապես գտնվում է մեր պետության և ղեկավարության հոգածության ու ուշադրության ներքո, իսկ 2008 թվականից առանձնակի ուշադրություն է դարձվում հայազիտությանը՝ որպես գիտության զարգացման գերակա ուղղություն: Պետությունը խիստ կարևորում է հայազիտության ոլորտում իրականացվող աշխատանքները և ոլորտի զարգացմանն ուղղված միջոցառումները:

Հայազիտության և հասարակական գիտությունների զարգացման խթանումը ներկայումս դարձել է մեր ազգային քաղաքականության կարևորագույն ուղղություններից մեկը՝ կոչված պահպանելու ինչպես հայ ժողովրդի ազգային նկարագիրը, այնպես էլ՝ սերունդներին կրթելու, հայեցի դաստիարակելու և հայրենիքին նվիրված քաղաքացիներ պատրաստելու առաքելությունը:

Այս առումով խիստ ողջունելի էր դեռևս 1997 թ.-ին ՀՀ ԳԱԱ Շիրակի հայազիտական հետազոտությունների կենտրոնի հիմնումը, որը, լինելով Հայաստանի տարածաշրջանային գիտական հաստատություն, իրականացնում է հնագիտական, պատմական, ազգագրական և բանագիտական ուսումնասիրություններ և հետազոտություններ, որոնցից յուրաքանչյուրը, դատելով ներկայացված նկարագրություններից և այդ հետազոտություններն իրականացնող միավորների գործունեության արդյունավետության ցուցանիշներից, յուրովի արդիական են, հեռանկարային և ունեն ոչ միայն տարածաշրջանային, այլև՝ համապետական նշանակություն:

Ընդհանուր առմամբ, գիտության հայազիտական ճյուղերը պետք է նպատակաուղղվեն Հայաստանի Հանրապետության անկախ պետականության կայացմանն ու հզորացմանը, նպաստեն հայոց ազգային գաղափարախոսության ձևավորմանը, դառնան ազգային ու մշակութային անվտանգության ապահովման հզոր գործոն: Այս հարցում իր կարևորագույն համակարգող դերակատարումը պետք է ունենա ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան՝ իր կառույցներով, ինչու չէ նաև՝ տարածաշրջանային կարևորություն ունեցող Ձեր կենտրոնի միջոցով: Այս առումով անչափ կարևոր ենք համարում նաև Ձեր կենտրոնում իրականացվող այն ուսումնասիրությունները, որոնք անմիջականորեն առնչվում են Հայաստանի Հանրապետության հարևան ժողովուրդների պատմության, մշակույթի ու լեզվի խնդիրներին:

Հայազիտության զարգացումը պահանջում է բազմաթիվ հիմնարար և կիրառական խնդիրների լուծում: Այսօր այս ոլորտում հրատապ խնդիր է դարձել միասնական հայազիտական ցանցի ստեղծումը հայաստանյան և օտարերկրյա պետությունների, առաջին հերթին՝ սփյուռքի հայազետների ներգրավմամբ՝ երիտասարդ մասնագետների պատրաստման, վերապատրաստման և փոխանակման, ինչպես նաև՝ միջազգային չափանիշներին համապատասխանող գիտական

հանդես հրատարակելու առումներով: Այս առումով ևս ողջունելի է Շիրակի հայագիտական կենտրոնի իրականացրած աշխատանքները՝ հեղինակավոր միջազգային գիտաժողովների կազմակերպումը, արտերկրի գիտնականների հետ համատեղ հոդվածների հրատարակումը, միջազգային գիտական միջոցառումներին կենտրոնի աշխատակիցների մասնակցությունը և, առանձնապես, կենտրոնի գիտական հետազոտություններին օտարերկրյա գիտնականների մասնակցությունը:

Կարծում եմ կենտրոնի գործունեությունը կարող է ունենալ նաև միջմարզային և տարածաշրջանային խնդիրները լուծելու առաքելություն, կարող է իր վրա է վերցնել Շիրակի, Լոռու, Տավուշի մարզի հայագետ մասնագետների պատրաստման և վերապատրաստման պատասխանատու գործը:

Կցանկանայի, որ ապագայում Շիրակի հայագիտական կենտրոնն ավելի ակտիվորեն մասնակցեր ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի կողմից կազմակերպվող մրցույթներին, ծրագրերին: Դա հնարավորություն կտա կենտրոնի գիտաշխատողներին ներգրավված լինել պետական բյուջեից ֆինանսավորվող գիտական և գիտատեխնիկական թեմաներում և ծրագրերում, կազմակերպել տարբեր գիտական միջոցառումներ, իսկ երիտասարդ գիտնականներին՝ մասնակցել, ինչու չէ, նաև կազմակերպել ամառային դպրոցներ, օգտվել երիտասարդների աջակցությանն ուղղված դրամաշնորհներից:

Միայն պետական ու գիտականորեն հիմնավորված մոտեցումներով է հնարավոր Հայաստանի Հանրապետությունը որպես հայագիտության կենտրոն պահպանելու և հետագա զարգացումն ապահովելու հեռանկարը:

Հարգելի գործընկերներ,

Կրկին շնորհավորում եմ ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի հիմնադրման 20-ամյակի կապակցությամբ:

Անսպառ եռանդ, գործին սեր ու նվիրում եմ մաղթում կենտրոնի ղեկավարությանը և ողջ անձնակազմին: Հաջողություններ և նորանոր ձեռքբերումներ ձեզ հայագիտության ոլորտի զարգացման գործում:

**ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահ
Ֆ.մ. գ. դոկտոր, պրոֆեսոր Սամվել Հարությունյան**